

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

2021 թվականի հունիսի 3-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 12-րդ^ա դասարանի դասարանական և ծնողական համատեղ ժողովը:

Ժողովին ներկա էին բոլոր աշակերտներն ու ծնողները:

Ժողովը վարում էր դասղեկ Գոհար Ղազարյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2020-2021 ուստարվա արդյունքների ամփոփում:
Պետական ավարտական և միասնական քննություններին աշակերտների մասնակցելու հարցը:
2. Համավարակի պայմաններում «Վերջին գանգ»-ի կազմակերպման գործընթացի հետ առնչվող հարցեր:

1.Լսեցին. - 2020-2021 ուստարվա արդյունքների ամփոփման, պետական ավարտական և միասնական քննություններին աշակերտների մասնակցելու հարցը:

Ամփոփիչ խոսքով հանդես եկավ դասղեկ Գոհար Ղազարյանը: Նա նշեց, որ 2020-2021 ուսումնական տարին 12-րդ^ա դասարանն ավարտեց 100 % առաջադիմությամբ:

Ուսումնական տարին սկսվեց սեպտեմբերի 15-ին համավարակի շարունակվելու պատճառով: Դասերն սկսեցինք խմբերով, 6-օրյա աշխատանքային ռեժիմով: Սեպտեմբերի 27-ին սկսված պատերազմի և շարունակվող համավարակի պայմաններում՝ որոշակի ժամանակահատվածում, դասերը պարապեցինք նաև հեռավար կարգով, հետո նորից անցանք առկա պարապմունքների: Մեր ժողովրդին պատուհասած այսպիսի դժվարին պայմաններում հասցրինք անցնել ուսումնական ծրագրով նախատեսված բոլոր առարկաների ծրագրային նյութերը, ժամանակին տրվեցին բոլոր տեսակի գրավոր աշխատանքները, և այն հաջողությամբ կավարտենք հունիսի 5-ին:

Դպրոցներում դեռ շարունակվելու են ոչ ավարտական ու ոչ քննական դասարանների պարապմունքները, իսկ 12-րդ դասարաններում արդեն ամփոփվել են արդյունքները, և նրանք հունիսի 5-ից դադարեցնում են դասերը՝ պետական ավարտական և միասնական քննություններին նախապատրաստվելու համար:

Քննություններն սկսվելու են հունիսի 8-ից:

Առաջին կիսամյակում ամփոփվել են որոշ առարկաների արդյունքները: Երկրորդ կիսամյակում շարունակվել են մի քանի առարկաների դասընթացը, ուստի այդ ուսումնասիրած առարկաներից պիտի հանձնեն քննություն դպրոցում և մարզում՝ կենտրոնացված ձևով:

Բուհերի դիմորդները կմասնակցեն իրենց ընտրած բուհի քննություններին առաջին և երկրորդ փուլերով (արդեն հայտի են օրերը, առարկաները և անցկացման վայրը), իսկ դպրոցներում կանցկացվեն պետական ավարտական քննություններ: Քննությունների ավարտից հետո դրական գնահատական ստացած աշակերտները

կատանան ատեստատներ:

Այս 2020-2021 ուսումնական տարում ավարտական դասարանում գերազանցիկ աշակերտ չունեցանք, ունենք 6 հարվածային աշակերտներ՝ Առաքելյան Մարիամ Աշոտի, Եղիազարյան Քրիստինե Գնելի, Խաչատրյան Սուսաննա Սարգսի, Մնացականյան Մարիամ Վաչագանի, Սարգսյան Գեղամ Սարգսի, Վարդանյան Մայրանուշ Վանիկի:

Ընդհանուր բացակայությունը կազմում է մոտավորապես 120 դասաժամ, որական կանոնները 33,3% է:

Որոշեցին .- Ի գիտություն ընդունել դասարանի ղեկավարի ներկայացրած 12-րդ դասարանի տարեկան ամփոփիչ արդյունքները՝ կատարված ուսումնական գործընթացի, պետական ու ավարտական քննություններին նախապատրաստվելու և անցկացվելու հետ: Դասղեկն ու ծնողները շնորհավորեցին աշակերտներին՝ 12-րդ դասարանն ավարտելու կապակցությամբ:

2.Լսեցին.- Համավարակի պայմաններում «Վերջին գանգ»-ի կազմակերպման գործընթացի հետ առնչվող հարցեր:

Օրակարգի երկրորդ հարցի կապակցությամբ խոսեցին և՛ դասղեկը, և՛ աշակերտները, և ծնողները:

Նշվեց, որ դասարանի աշակերտները դասղեկի գլխավորությամբ, ծնողների ու դպրոցի կազմակերպչի օգնությամբ կազմակերպել են «ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳ» միջոցառումը, այն կայանալու է հունիսի 5-ին, որին հրավիրված են միայն ծնողները: Այդ նպատակով դահլիճում պետք է պահպանել համաճարակի հետ կապված բոլոր կանոնները:

Որոշեցին.- Տնօրենության հսկողությամբ, դասղեկի գլխավորությամբ և ծնողների մասնակցությամբ անցկացնել «ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳ» միջոցառումը՝ պահպանելով համաճարակի հետ կապված բոլոր կանոնները:

Ժողովի նախագահ՝
Քարտուղար՝

Թ. Մկրտչյան
Լ. Հովհաննիսյան